ԻԲՆ ԿՈՒՏԱՅԲԱ

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
(ՔԻՏԱԲ ԱԼ-ՄԱԱՐԻՖ)

էջ 12

Նոյն այդ բանը կատարեց (կառուցեց տապանը) և Ալլահն ուղարկեց ջրհեղեղը երկրի վրա:

[Տապանը] մնաց ջրերի վրա հարյուր հիսուն օր:

Վեցերորդ ամսում կանգնեց Կարդա[1] լեռան վրա, իսկ տասներորդ ամսում երևացին լեռների գագաթները:

Իսկ Վահբն ասել է, թե մեզ պատմել են, որ տապանը (նավը) ճանապարհ ընկավ Ռաջաբ ամսի վերջից տասն օր մնացած (Ռաջաբի 20) և մնաց տապանի վրա հարյուր հիսուն օր, ապա մեկ ամիս կանգնեց Արաբադ (Ջուդի)[2] լեռան վրա, որը լեռ է Ջազիրա երկրում և (մարդիկ) դուրս եկան Մուհառամ ամսի վերջից տաս օր մնացած (Մուհառամի 20):

Երբ դուրս եկան, կառուցեցին Կարդա գյուղը, որը կոչվեց Սամանին[3] (Թամանին, ութ՝սուն), քանզի նրանում կար ութ՝սուն տուն, յուրաքանչյուրը ամեն մեկի համար, որը նրա (Նոյի) հետ ազատվել էր: Մինչև օրս էլ կոչվում է Սամանինի չուկա:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Խորասանը նվաճվեց Օսման խալիֆայի[4] օրոք հաշտության [պայմանով]: Ինչ վերաբերում է Թաբարիստանին, Վրկանին (Ջուրջան) ու Ռեյին, ապա վերջինս նվաճվել է Օսման իբն Աֆֆանի[5] խալիֆայության ժամանակ հաշտության [պայմանագրով] Աբու Մուսա ալ-Աշաարիի կողմից, իսկ Թարարիստանը նվաճել է Սաաղ իբն ալ-Ասը հաշտության [պայմանագրով] Օսմանի օրոք:

Քիրմանն ու Սիջիստանը նվաճել է Արդալլահ իբն Ամիր իբն Քարիզը հաշտության [պայմանագրով], Ջարալն ամբողջովին նվաճվել է բռնի ուժով, իսկ Ահուազը, Ֆարսը նույնպես նվաճվել են բռնի ուժով:

Սավաղն ամբողջովին բռնի ուժով է նվաճել Սաաղը Օմարի իբն-

փայությունի ժամանակ. Ջազիրան հաշտության [պայմանագրով] նվաճել է Իյազ իբն Ղանմը: Ինչ վերաբերում է Ասորիքին (Շամ), ապա Աջնադինը նվաճեց հաշտության [պայմանագրով] Աբու Բաքրի խալիֆայության ժամանակ, իսկ Օմար իբն ալ-Խաթթաբը նվաճեց Սուրբ քաղաքը (Երուսաղեմ): Ասորիքի բոլոր քաղաքները նվաճվել են Օմարի օրոք[6] հաշտության [պայմանագրով], սակայն ոչ նրա հոգային տիրույթները, որոնք բռնի ուժով են նվաճվել Յազիդ իբն Աբու Սուֆիանի, Շուրահբիլ իբն Հասանայի, Աբու Ուբայդայի ու Խալիդ իբն ալ-Վալիդի ձեռքով: Եգիպտոսը նվաճվել է հաշտության [պայմանագրով] Ամր իբն ալ-Ասի ձեռքով: Մաղրիբը, որն Իֆրիկիան է, նվաճվել է բռնի ուժով: Սահմանային ամրություններ գոտին (սուղուր) և Կեսարիան նվաճվել են Օմարի օրոք՝ բռնի ուժով:

էջ 199

Ապա Մամունը գնաց Տարսոն (Թարսուս) երկու հարյուր տասնհինգ թվականի Մուհառամ ամսին (28 փետրվար – 29 մարտ 830): Նա հարձակվեց հռոմների վրա ու նվաճեց Կուռա[7], Խարսիանոն (Խարշանա)[8] և Սամալու[9] ամրոցները: Ապա վերադարձավ Դամասկոս, հետո գնաց Եգիպտոս ու կրկին վերադարձավ Դամասկոս:

Նա կրկին արշավեց հռոմների դեմ երկու հարյուր տասնյոթ (7 փետրվար 832 – 26 հունվար 833) թվականին: Այդ տարի նվաճվեց Լուլուան[10] և նա հրամայեց կառուցել Տիանան (Թուանա)[11]: Վերջապես Մամունը վերադարձավ ու գնաց Ռակկա:

Ապա նա վերստին դիմեց դեպի հռոմների երկիրը և մնաց Պոտանդոն (Բադանդուն) գետի[12] մոտ երկու հարյուր տասնյոթ թվականի Ռաջաբ ամսի տասնյոթին (7 օգոստոս 833): Նրա մարմինը փոխադրվեց Տարսոն և այնտեղ թաղվեց:

[Մուտասիմի օրոք] հռոմները պաշարեցին Զապետրան (Զիբաթրա)[13]: Ապա Իսհակն արշավեց նրանց դեմ, ասպատակեց Ռումի երկիրը երկու հարյուր քսաներեք թվականի Ջումադա Ա ամսին (31 մարտ – 29 ապրիլ 838) և գրավեց Ամորիոնը (Ամմուրիյա)[14] նույն տարվա Ռամազան ամսին (27 հուլիս – 25 օգոստոս 838):